

պես առանձին պայմանագրի (միջնորդ պայմանավորվածություն), այնպես էլ հիմնական պայմանագրում վերապահման (միջնորդ վերապահում) ձևով:

Միջնորդ դատարանում գործի քննությունն իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, քաղաքացիական դատավարության օրենսգրքի, «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի հիմանված:

Միջնորդ դատարանի վճիռը կատարվում է կամավոր: Սահմանված ժամկետում և կարգով վճիռը չկատարվելու դեպքում կողմն իրավունք ունի դիմել միջնորդ դատարանի գտնվելու վայրի առաջին ատյանի կամ տնտեսական դատարան՝ միջնորդ դատարանի վճող հարկադիր կատարման համար կատարողական թերթ ստանալու պահանջով:

ՓՈՁՐ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ տնտեսական վեճերի լուծման տարածված այլնուրանքային ձև է, որն այդպես է կոչվում դատական ընթացակարգերին ներքին նմանության պատճառով: Փոքր դատավարության դեպքում վեճը քննարկվում և լուծվում է վիճարկող կողմների դեկավարների, իրավաբանների և գործի քննությանը մասնակցող անկախ երրորդ անձի մասնակցությամբ, որը, որպես կանոն, փորձ ունեցող նախկին դատավոր է:

Դատական նիստից առաջ կողմերը պարտադիր կարգով փոխանակվում են տեղեկատվությամբ, որը բույլ է տալիս ճշգրտել կողմների հետաքրքրությունները: Նիստը կարող են նախագահել կողմների դեկավարները կամ անկախ երրորդ անձը:

Գործի ներկայացումից հետո կողմերն անցնում են քանակցությունների փուլին, որին մասնակցում է երրորդ անձը: Նա հանդես է գալիս կամ որպես միջնորդ կամ որպես անկախ խորհրդատու և եղբակացություն է տալիս վեճի լուծման վերաբերյալ, որը կողմները կարող են հաշվի առնել փոխզիջման հանգելիս:

ԱՆԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅՈՒՆԸ գործի ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՍԱՍՆ ՆՊԱՏԱԿՈՎ իրենից ներկայացնում է կողմների կողմից համաձայնության կայացման մի ընթացկարգ, որը հիմնվում է գործի փաստական հանգամանքները ուսումնասիրած որակավորված մասնագետի եղբակացության վրա:

Լրացուցիչ տեղեկություններ, ինչպես նաև ՀԵԽԱ
և ՓՄՌՀ-ի կողմից հիմնադրված միջնորդ դատարան կարող եք դիմել հետևյալ հասցեներով՝

- ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2,
հեռախոս՝ (374 10) 540199, ֆաքս՝ (374 10) 580299,
Էլ. փոստ՝ ayla@ayla.am
- ք. Գյումրի, Տիգրան Մեծի պողոտա 1, բն. 2,
հեռախոս՝ (374 312) 23812, ֆաքս՝ (374 312) 38236,
Էլ. փոստ՝ gyumri@ayla.am
- ք. Իջևան, Սահմանադրության իրավարակ 1,
Մարզպետարանի շենք,
հեռախոս/ֆաքս (374 263) 32499,
Էլ. փոստ՝ ijevan@ayla.am
- ք. Վանաձոր, Վարդանանց 82, բն. 1,
հեռախոս/ֆաքս (374 322) 22317,
Էլ. փոստ՝ vanadzor@ayla.am
- ք. Գավառ, Մարզպետարանի շենք,
հեռախոս/ֆաքս (374 264) 25503,
Էլ. փոստ՝ gavar@ayla.am
- ք. Գորիս, Մաշտոցի 3,
հեռախոս/ֆաքս՝ (374 284) 25861,
Էլ. փոստ՝ goris@ayla.am
- ք. Կապան, Ա. Մանուկյան 1, բն. 72
հեռախոս/ֆաքս՝ (374 285) 62511,
Էլ. փոստ՝ kapan@ayla.am:
Նաև կարող եք այցելել ՀԵԽԱ վեբ կայք՝
www.ayla.am:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ**

**ՎԵճԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ
ԱՅԼԵՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

Սույն տեղեկատվական թերթիկում ընդհանուր և հակիչ տեղեկատվություն է տրվում վեճերի լուծման այլնուրանքային եղանակների և դրանց առանձնահատկությունների վերաբերյալ:

Սույն հրատարակությունը ստեղծվել է ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակարգյան Եվրոպայի և Եվրասիայի բյուրոյի տնտեսական զարգացման գրասենյակի աջակցությամբ՝ EMT-G-00-02-00008-00 դրամաշնորհի պայմանների համաձայն: Ներկայացված կարծիքները պատկանում են Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասցիսացիային (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ. 540199, վեբ կայք www.ayla.am) և պարտադիր չեն, որ համեմատնեն ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակարգյան տեսակետներին: «Միջնորդ դատարանների և միջնորդ քննության ինստիտուտի զարգացումը Հայաստանում» ծրագիրը Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասցիսացիային իրականացնում է Փոքր և միջին բիզնեսի հիմնարարակի հետ համատեղ:



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



THE EURASIA
FOUNDATION
REPRESENTATIVE OFFICE IN ARMENIA

Նոյեմբեր, 2005

ՈՐՈՇԵՔ ԵՆ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼՇՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՊԱՍԱԿՆԵՐԸ

Վեճերի լուծման այլընտրանքային եղանակները հնարքների և մեթոդների համակցություն են, որոնք՝ որպես տվյալ պետության պաշտոնական դատական համակարգի այլընտրանք, կիրառվում են վեճերի լուծման նպատակով:

Վեճերի լուծման այլընտրանքային մեթոդների կիրառումը հնարքավորություն է տախու հասնել իրավական բնույթի վեճերի արագ և արդյունավետ լուծման, նվազեցնել տնտեսավարող սուբյեկտների՝ դատական մարմիններուն վեճեր լուծելու հետ կապված ֆինանսական ծախսերը, հեշտացնել կապը արդարադատության հետ, ապահովել մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետությունը և այլն:

Վեճերի լուծման այլընտրանքային հիմնական մեթոդներն են.

- ա) բանակցությունները (eg a),
- բ) միջնորդությունը (ed a),
- գ) միջնորդ դատավարություն (a b a),
- դ) փոքր դատավարություն (- a),
- ե) անկախ փորձաքննություն՝ գործի փաստական հանգամանքների պարզաբանման նպատակով (c - a e c fac -f d g):

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԵՐԸ գործնքաց է, որի միջոցով վիճարկող կողմերը, առանց երրորդ անձանց մասնակցության, միմյանց հետ քննարկում են վեճը՝ ձգտելով հասնել փոխանդունելի համաձայնության:

Բանակցությունների ամբողջ գործնքացը բաժանվում է հետևյալ փուլերի.

ա) նախապատրաստություն բանակցություններին,

բ) ընթացակարգային համաձայնությունների կայացում,

- գ) կողմերի ելույթներ,
- դ) կողմերի շահերի պարզաբանում,
- ե) օրակարգի ձևավորում,

- զ) առաջարկությունների կատարում և քննարկում,
- է) որշման կայացում և համաձայնության ձևակերպում,

- ը) բանակցությունների ավարտ:

ՄԻՋՆՈՐԴՅՈՒԹՅՈՒՆԸ չեղող միջնորդի մասնակցությամբ բանակցությունների հիման վրա կողմերի միջև եղած լուծման գործնքաց է: Սա մի մերող է, որի կիրառման ժամանակ կողմերն իրենք են կառա-

վարում և դեկավարում ինչպես գործնքացը, այնպես էլ դրա արդյունքում ծնված համաձայնությունը: Առանց կողմերի համաձայնության ոչինչ չի որոշվում:

Միջնորդությանը բնորոշ են հետևյալ սկզբունքները. չեղորդություն, կամավորություն, կոնֆիդենցիալություն:

Միջնորդի չեղորդությունը և անկողմնակալությունը կողմերին հնարքավորություն է տախու բացվել, վստահություն տածել գործնքացի նկատմամբ, աշխատել համագործակցության մթնոլորտում:

Կամավորության սկզբունքը նշանակում է, որ բացի միջնորդության գործնքացին կամավոր մասնակցելուց, կողմերը նաև հնարքավորություն ունեն մինչև համաձայնության կայացումը, գործնքացի ցանկացած փուլում դուրս գալու գործնքացից: Միջնորդը չափոր է խորհուրդներ տա: Որոշումների կայացման և դրանց իրականացման ողջ պատասխանատվությունը ընկում է կողմերի վրա:

Կոնֆիդենցիալությունը արտահայտվում է նրանում, որ կողմերի և միջնորդի ընդիհանուր համաձայնությամբ ամբողջ գործնքացը գաղտնի է պահպան, գործնքացի ընթացքում կատարված բոլոր գրառումները և ձայնագրությունները ոչնչացվում են, միջնորդը իրավունք չունի այդ գործով դատարանում հանդես գալ որպես վկա:

Միջնորդությունը, որպես կանոն, ունի որոշակի փուլեր: Դրանք են.

ա) Նախարան: Միջնորդը կողմերին հակիրճ ներկայացնում է իր և կողմերի հիմնական գործառույթները, սահմանում է ընդիհանուր կանոններ (օր. չընդհատել մեկմեկու, չօգտագործել վերապրական արտահայտություններ և այլն), բացատրում է միջնորդության հիմնական սկզբունքները:

բ) Կողմերի ներածական խոսքը: Կողմերից յուրաքանչյուրը ներկայացնում է կատարվածը իր տեսակետից: Յուրաքանչյուրի շարադրանքից հետո միջնորդը իր խոսքերով վերաշարադրում է այն՝ ճշգրտելով տեղեկատվությունը և մեղմացնելով շեշտադրումը: Սա, որպես կանոն, կողմերի առաջին հնարքավորությունն է լսել միմյանց: Խնդրի վերաբերյալ իրենց կարծիքը հայտնելուց հետո կողմերը հնարքավորություն են ստանում ավելացնել կամ ճշգրտել ասվածը:

զ) Օրակարգի ձևակերպում: Միջնորդը կողմերին աջակցում է փաստերը տարածաշատել մեկնարանություններից և առանձնացնել քննարկման ենթակա խնդիրները:

դ) Այլնուրանքային որոշումների առաջադրում: Միջնորդը պահպանելով կողմերի ուժերի բալանսը, հորդորում է նրանց մտածել, գործել և բանակցել համագործակցության ոգով և գոնել լուծումներ, որոնք կհամապատասխանեն ինչպես իրենց, այնպես էլ մյուս կողմի շահերին: Կողմերը միջնորդի օգնությամբ ամբողջացնում են խնդրի հնարքավոր լուծումները:

ե) Լուծման գնահատում և ընտրություն: Հիմնվելով արտահայտված մտքերի վրա՝ միջնորդը օգնում է կողմերին առանձնացնել այն լուծումները, որին համաձայն են կողմերը: Նա կողմերի հետ քննարկում է այդ լուծումների հնարքավոր հետևանքները՝ այն համեմատելով կողմերից յուրաքանչյուրի սպասելիքների հետ:

զ) Համաձայնության կայացում: Միջնորդը օժանդակում է կողմերին հասնելու փոխահավետ համաձայնության և վավերացնելու այն գրավոր ձևով: Համաձայնագրում պետք է ներառվեն նաև դրա հնարքավոր խախտման հետևանքները: Համաձայնագրի պետք է լինի կոնկրետ, հստակ, իրատեսական և կողմերի համար միանշանակ հասկանալի:

ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ իրավական բնույթի վեճերի լուծման այլընտրանքային ձև է, որն իրականացվում է կողմերի կողմից ընտրված (նշանակված) ոչ պետական դատարանի կողմից կողմերի կողմից, ինչպես նաև օրենքով կամ միջազգային պայմանագրով սահմանված կարգով:

Կարող են ստեղծվել մշտական գործող միջնորդ դատարաններ և կոնկրետ վեճը լուծող (ad ... c) միջնորդ դատարաններ:

Մշտական գործող միջնորդ դատարանները ստեղծվում են տարբեր կազմակերպությունների կամ հաստատություններին առընթեր, որպես դրանց կառուցվածքային ստորաբաժանում կամ ստեղծվում են որպես ինքնուրույն իրավաբանական անձ՝ աշխատակիցների և միջնորդ դատարանների կազմով:

Միջնորդ դատարանի հիմնադիրները հաստատում են դրա կանոնադրությունը, միջնորդ դատարանների կազմը և այլ հարցեր:

Կոնկրետ վեճի լուծման համար ստեղծված միջնորդ դատարանը ստեղծվում է կողմերի կողմից, բաղկացած է կենսու թվով ֆիզիկական անձանցից և վեճի լուծումից հետո դատարանների կազմով:

Միջնորդ դատարանի միջնադիրները ընտրության մեջ միջնորդ դատարանների մշտական գործող դատարանների կազմով:

Միջնորդ դատարանի կառավագայության մեջ միջնորդ դատարանների մշտական գործող դատարանների կազմով: